Շախմատի հսկան այցելել է արքայական ամրոց

01.07.2014

Օրեր առաջ, 2014թ. հունիսի 28-ին հայկական և միջազգային շախմատի հսկա Լևոն Արոնյանն այցելել է Էրեբունի ամրոցի միջնաբերդ և թանգարան՝ նպատակ ունենալով բացահայտել մայրաքաղաք Երևանի ծննդավայր Էրեբունին: Աշխարհահռչակ գրոսմայստերին արքայական ամրոցը ներկայացրել է արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը. նրանք բավականին երկար շրջել են միջնաբերդում և Լ. Արոնյանին հետաքրքրել են գրեթե բոլոր պահպանված կառույցները և վերջին տարիներին պեղված մակերեսները:

Լ. Արոնյանը ծանոթացել է նաև թանգարանի մշտական ցուցադրությանը և իր տպավորություններն է թողել պատվավոր հյուրերի Գրառումների գրքում: Ընդունելով նույն կեցվածքը, որով նրան սովորաբար տեսնում ենք շախմատի տախտակի առջև, նա գրել է հետևյալը. **<<**Ճանաչելով մեր անցյալը, մեր հայրենիքը՝ Հայաստանը սիրող յուրաքանչյուր ոք հպարտություն է զգում և վերցնում է իր նախնիների ուժը*:* Շնորհակալություն, որ ինձ ներկայացրեցիք և մեկնաբանեցիք շատ բաներ Ուրարտուի և Էրեբունիի մասին*:* Այն ամենը, ինչ դուք փոխանցում եք, անգնահատելի է ***>>:***

<<Էրեբունի>> արգելոց-թանգարանի աշխատակազմը Լ. Արոնյանին ընդունել և ճանապարհել է առանձնակի ջերմությամբ: Լ. Արոնյանը սիրով և իր հմայիչ ժպիտով նաև լուսանկարվել է արգելոց-թանգարանի աշխատակիցների հետ:

Լևոն Արոնյանն Էրեբունի էր այցելել իր պրոդյուսեր Հրանտ Հակոբյանի և մի քանի ընկերների հետ:

1 / 1